

ստորագրելի քամին, որ մեր վիճակի օգը վատացնող սեւ սեւ ամպեր է բերում, եւ Դու ես, որ Քո կամքովդ ծագում ես երկրնքից մեր վերայ մեզ ուրախացնող արեգակն, որ մեզ շունչ է առնել տալիս եւ նորոգում, Ինչ որ մեզ աշխատեալ ես, կամ մեզանից առնում, ամենն եւս իմաստութեամբ ու բարութեամբ ես անում: Ո՛վ իմ Աստուած, տուր ինձ զօրութիւն, որ իմ մէջս պատերազմեմ հաւատի բարեք պատերազմը: Տուր ինձ կարողութիւն, որ ամենաճանր ու անտանելի վիճակիս մէջ եւս Քեզ հաւատարիմ մնամ: Ես լռում եմ Քո առաջին թէ՛ բաղդաւորութեանս եւ թէ՛ անբաղդութեանս մէջ, որովհետեւ ես ճանաչում եմ ու հասկանում, որ Դու իմ Աստուածս ես:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՆԱՀԱՆԳՆ ԿԱՐՈՒՑ.

« ԱՐԱՐԱՏ », (Օգոստոս) .

Կարս զաւառի Տաճկաբնակ զնղերն, Նախընթաց շորս գիւղերէն զստ գրտնուած բոլոր գիւղերն եւ հայարնակ եղած են զարուս սկիզբներն, և հետզհետէ Ռուսաց ու Օսմանցոց մէջ պատահած պատերազմներումն Հայերն իրենց տեղերն թողած, անցել են Ռուսաստանի սահմանն: Այս գիւղերէն որոնց որ գերեզմանատներն ու եկեղեցոց հիմունքն կըմնան, կը նշանակեմք այս տեղ, որք են.

Պողոտչ. Պայղարայ. Օրթայ - Ղալայ<sup>1)</sup>. Եասսըճայ. Խօշայ - Բունար<sup>2)</sup>. Բէքէճ<sup>3)</sup>. Ազճայ - Ղալայ. Պաշ - Բեշ<sup>4)</sup>. Վերին - Շէն. Խաս - Գեշ. Պէգիրկէն - Կէշիտ<sup>5)</sup>. Կիւլլու<sup>6)</sup>. Թողանլու. Ճաւլախ. Փարսաղան. Ալի - Սո-

(1) Միջին բերդ կնշանակէ. որմէ կհետեւի թէ երկու կողմն ուրիշ մի մի բերդեր եւս կան:

(2) Կընշանակէ զոյգ աղբերակունք:

(3) Թերեւս Տարօնեցոյն յիշած կաճկաբարն է. այս գիւղին մտ Տեօշ - Ղալայ աստուած լեռնակի արեւելեան ստորոտումն վանաց աւերակ մի կայ, զոր կանրկաուր կանոնանն տեղացիք, որ է կնդրակատար Աստուածածին, ինչպէս Հայերն աւանդութեամբ կոսեն: Այս աեղ ուխտիւք կըղիմեն բոլոր դաւառի ցաւագարներն եւ կը բժշկուին:

(4) Կընշանակէ մեծ շիւղ, կամ Աւան:

(5) Կընշանակէ վաճառականաց անցք. Թերեւս հին ժամանակներն Սեւ ծովի առեւտրականներն իրենց ապրանքներն այս ճանապարհաւ կանցունէին վանանդոյ սահմաններն ճորոխի նաւարկութեան ժամանակներում. որ նոյն ճանապարհի բերուան է, եւ Թերեւս Օսմանցոց տիրապետութենէն յետոյ եւս այս տեղ մնքոստուն նշանակուած լինի:

(6) Տաճկերէն դպրութեան մէջ կարելի է կարգաւ վարդեմէք կամ Մոխրեոց:

Ֆի. Ագ. Եսառ. Վերին. Քօթանլու. Իկտիր. Խարաքիլիսէ. Մասմուտճուղ. Թողլուճայ. Թէփէճիկ. Քիրլիկ<sup>1)</sup>. Արտոստ. Իլանլու. Սուսուղ. Մուշագ. Թուլղուն. Մրխէլ. Լաչակերտ. Խաս. Պէկ. Էյրիճէ. Եօլ — Կէշմէղ. Խարա — Խաչ. Պէրտիկ. Ագ — գում. Հարամ. Վարգան. Եէտի. Քիլիսէ<sup>2)</sup>. Տիւիկ. Չաթաղ. Լալ — Օղլի. Աս. Պուղայ.

Պաշ. Քեօյ. Վերին. Շէն, Խասգեղ և Պէզիրկէն - Կէշիտ գեղերում վանքի կամ մեծ եկեղեցւոյ աւերակներն յայտնի են տակաւին. իսկ միւսներուն մէջ շատերն Քիլիսէ. Եէրի (եկեղեցւոյ տեղ) աւանդութեամբ կը յիշուին տաճիկ բնակիչներէն ևս. գերեզմանատներն ամեն տեղ կան, բայց կոփածոյ տապանաքարերն երբէք չեն երևիր, որոնք տեղ տեղ ձիթահանքներում կերևին. միայն Ագ. Եսառ գիւղի գերեզմանատան խաչքարերն ևս կը մնան տակաւին, նոյնպէս և մի հատ խաչ քար կերևի Արտոստի գերեզմանատանում:

Բասնէ գաւառակի գիւղերն. Վանանղայ այս գաւառակին մէջ այժմ հայաբնակ գիւղ մնացած չէ ամենեւին, բայց բաւական թուով ամայի վանքեր կան, ոմանք գիւղերու մէջ, և ոմանք անտառաց մէջ գիւղերու աւերակներուն վերայ բարձրացած. ուստի այս տեղ նախ կը դնեմք այն ամայի և կիսաւեր վանուց նկարագիրն, ու ետքն սորա վերայ կը յաւելումք ստորին կամ ներքին Բասնէն Ռուսաց սահմանին մէջ մնացած հայաբնակ գիւղերն:

Խարախուրուսի վանք<sup>3)</sup>. Ներքին Բասնէն ի Վանանղ անցնելու Երասխայ անցքին անմիջապէս հիւսիսային ափումն կերևին ընդարձակ այգետեղեր, և նոցա մի անկիւնումն երկու ձորերու գետախառնուները բաժանող բլրակի մի վերայ բաւական ընդարձակ գիւղի մի աւերակ. արևելեան ձորին անմիջապէս ափին վերայ կը բարձրանան խաչքարեր և տապանաքարեր, և նոցա մէջ տեղ եկեղեցի հաստահիմն. ոչ տապանաքարերուն վերայ և ոչ եկեղեցւոյ մէջ բնաւ գիր չերևիր. Եկեղեցւոյ հարաւային և արևմտեան զրոններու ճակատներէն հանուած արձանագրերի քարերուն տեղերն կերևին, Վանքի արտաքին պարսպի մնացորդներն կերևին տակաւին ձորին մէջ, նոյնպէս գիւղի կողմն կերևի միաբանաց սենեակներու աւերակներն. Եկեղեցւոյն կամարայարկն իջած լինելով, քանի տարի յառաջ Չէրքէզ գաղ-

(1) Կընշանակէ կալաքարի հանք:

(2) Վանանղ գաւառի արեւմտեան կողմն մի առանձին հովիտ է ամեն կողմէն քարաբլուր լեռներով պատած, այս բլուրներուն վերայ կերելին ամուր շէնքերու կրաշաղախ հիմունք. նոյնպէս հովտին մէջ եօթն եկեղեցիներու աւերակներ. որոց միայն չորսին կրաշաղախ որմերն կանգուն կան տակաւին, իսկ սրբատաշ քարերն ամբողջ տարուած են: Այս հովիտն է Թերեւս Լաստիվերտուլոյն յիշած Վանանղայ փորակն:

(3) Այս գաւառի ժողովուրդն առ հասարակ վանք ասելով կիմանան սրբատաշ քարերով շինուած եկեղեցիներն. իսկ մեք կը զանազանեմք այս տեղ կամ արձանագրութենէն տեղեկանալով, կամ շուրջը գտնուած միաբանական կացարաններու աւերակներէն նկատելով:

Թականներէն 15 տուն այս գիւղին մէջ բնակութիւն հաստատած ժամանակին, եկեղեցւոյն վերան ծածկած են տախտակամածով, և ի մզկիթ փոխարկած: Արեւմտեան դրան դիմացն ևս երկու սենեակ շինած են, ուր մոլլան կարգալ գրել կը սովորցնէ մանուկներուն: Այս գիւղն այժմ ներքին Խարախուրուտ կը կոչուի: (Որոյ աւերումն կերևի թէ երկու կողման ձորերուն այգիներն լեցուելուն պատճառաւն եղած լինի. կամ ամայութենէն ետքն այգիներն այնպէս գետի խիճերով լեցուած գարնան հեղեղներէն են գուցէ):

Խօշոյ - Բիլիսի (1) վանք Խարախուրուտէն մի ժամու չափ դէպ ի զառ ի վերն Ձէրքէզարնակ գիւղի մի հիւսիսային կողմն ընդարձակ ու մեծամեծ տապանաքարերով զարդարուած գերեզմանատան մէջ կարմրագոյն սրբատաշ քարերով շինած եկեղեցի մի կայ, որ աւելի մեծանձն մէկու գերեզմանն կարծել հաւանական է. բայց հարաւային կողմն եղած աւերակներն կը ցուցնեն թէ վանքի մի փոքր եկեղեցին կամ մատուռն է: Այս եկեղեցւոյ հարաւային կողմն աւերակաց վերայ Բիւրտ ընտանիք մի տուն և բնակութիւն հաստատած է, և եկեղեցին կը զործածէ իրրե մասն իւր տանը: Այս գիւղի հարաւային կողմն ևս կայ մի եկեղեցի, որոյ ծածքն և որմոց բարձրութեան կէսն քանդկով, նոր ծածքով գոմ մի ձևացուցած է Ձէրքէզին մէկն, և դուռն արևելեան կողմի սեղանի կիսակամարի մէջ տեղէն բացել է: Այս եկեղեցին առանց սեան կերևի, որոյ սիւներու կիսախարիսխներն կերևին տակաւին հիւսիսային և հարաւային որմերու յատակներումն: Նոյնպէս կերևին և բնին ելնող երկու կողման բոլորչի սանդուխներն, և սեղանոյ կամարին զրուագաւոր երկու սիւներն:

Վանք Խօշոյ Բիլիսէ գիւղէն դէպ ի հիւսիս բարձրաւանդակի մի վերայ դարձեալ մի վայելուչ եկեղեցի կայ մեծաղիր և բարձրակամար. որոյ հարաւային դրան վերայ առանձին դաւիթ մի ևս կայ շինած գրեթէ միևնոյն ճարտարութեամբ: Այս գաւթին մուտքն արևելեան կողմէն է, այս մուտքի արտաքին կողմն բակին մէջ մի փոքր գմբէթ կայ վեց սիւնակներու վերայ բարձրացած, որ աւելի գերեզման մի լինել կերևի: Եկեղեցւոյն հիւսիսային և հարաւային արևելեան անկիւններումն աւանդատներու պատերն ծակած են, և մէջն մինչև ի կամարայարկն խոտով լեցուցած են քիւրտերն, որ այստեղ փարախներ ունին: Եկեղեցւոյն գիր լինելու սովորական տեղերն բանալով տեսանք, որ քանդակաւոր քարեր դրած կան և գիր չունին: Հիւսիսային կողմն միաբանաց տեղւոյն փլատակներն կերևին:

Բասնի սահմաններում գտնուող այս վանքերէն ոչ միոյն վերայ գիր չերևիր. գուցէ շինուած են սորա Բագրատունեաց թագաւորութեան ան-

(1) Խօշոյ - Բիլիսէ գոյգ մի եկեղեցիներ ասել է: այս տեղ մին կանգուն է ամբողջապէս, իսկ միւսն քանդած մնչելու լուսամուտներու կէսն, եւ փայտով ծածկած, գոմի փոխարկած են Ձէրքէզներն: Թերեւս այս գիւղի բնակիչ չայերն չուրմոսի վանքի կալուածին մէջ փոխադրուելով Խօշոյ - վանք անունն սկսած են սալ:

կուսէն վերջն, երբ ընթերցողներն պակասած էին, Այսպէս՝ կարելի է կարծել թէ գուցէ Արաստանի իշխանաց զօրացած և այս կողմերումն տիրած ժամանակներն շինուած լինին:

Իզնոցի վասի, Խօջայ—Քիլիսէի վանքէն զէպ ի հիւսիս լեռան միւս երեսում ամայի կը մնայ և այս վանքն, զարձեալ միւսնոյն կարմիր քարերով շինուած և բոլորովին անգիր, շուրջը գտնուած սենեակներու փլատակներն ևս կը մնան զիզուած՝) արեւմտեան կողմի քարերն հանուած են տեղ տեղ գիւղացի տաճիկ մի իւր ձմեռուան խոտն ու զարմանը լեցուցած է մէջը:

Սուրբ խաչ: Ստորին Բասենէն վերին Բասեն կամ Վանանդ անցնելու անցքին անմիջապէս զիմացը կը բարձրանայ Սուրբ Խաչ լեռն, որ իւր գլխումն եղած վանքի անուսովն կը կոչուի, և տեղացի տաճիկներն իսկ Խաչի լեռ (Հաչտաղը) կը կոչեն: Բասենի Հայերուն մէջ աւանդութիւն կայ, թէ այս վանքում մի հրաշագործ Խաչ կայ եղել Արաստանի թագաւորութեան ժամանակ զոր Հայ կրօնաւորներն առեր ու Արաստանի սահմանէն դուրս ելեր են, որպէս զի ազատին Արաց թագաւորի պահանջէն:

Այս վանքի շինութեան թուականն եթէ փնտնենք, պիտի գտնենք Գրիգոր Մամիկոնեանի իշխանութեան միջոցներն 659—683, որուն համար Արղանայ պատմութեան մէջ հետեւեալը կը կարդանք:

Առ այսու ժամանակօք (544—7 Հայոց) եմուտ սուրբ Խաչն Նունեայ ի յԱնի, այն որ ի յուրացմանն Աագզենի Արաց առաջնորդի դաղթեցաւ ի խորշս լերինն Պարխարու՝) ի ձեռն սուրբ Վանականին Անդրեասայ յաշակերտաց սրբոյն Սահակայ, և կացեալ անդ զեօթն ամն, և ապա ազդարարեալ Մամիկոնեանն Գրիգորոյ որդւոյ Հմայեկի տարաւ ի Վապդյան կոչեցեալ բերդ, և անտի փոխեցաւ ի Վանանդ և կոչեցաւ Վանանդայ Խաչ, և ի բառնալ տանն Մամիկոնէից յանօրէնն Սուքմանայ՝ բերաւ յԱնի ի Հայրապետութեանն տեառն Բարսղի, և կարգեցաւ նմա տօն Վիրակէն որ զկնի ութօրէից Խաչավերացն տօնի, Վարդան:

Գրիգոր Մամիկոնեան որ Արագածոտն դաւառի Թալիչ զիւղում կը բնակէր, և ժամանակին զիւրադրգիւ պատերազմներուն պատճառաւ Հայաստանի ամեն անառիկ բերդերն աւելի հոգածութեամբ իւր ձեռին ունէր, ինչպէս Արշարունիք, Երասխաձոր և Վանանդ գաւառներու բերդերն, նոյնպէս և Բասենի ամուր տեղերն իւր ձեռքն էին, այս ամուրներէն մին է և Խաչի լեռն, որոյ գագաթան վերայ գտնուած Սուրբ-Խաչի վանքն ան-

(1) Աւուր մթնեղուն, եւ ճանապարհէ դուրս լինելուն պատճառաւ այս իզնոցի վանքն չկրցանք տեսնել միայն թէ մեր ընկերներէն մին անձամբ գնաց տեսաւ որ գէր շուներ ոչ մի տեղում:

(2) Պարխար լեռանց խորշերում մի նշանաւոր վանք կայ այժմ եւս, ամայի բոլորովին, զոր չկարողացանք տեսնել Օսմանեաց սահմանին մէջ մնացած լինելուն համար, Տեսնողներն կը հաստատէին թէ շինութիւնն երեւելի է, այնպէս որ Թուրքումայ Էօզա եւ Խախոյ համբաւաւոր վանքերու շինութենէն աւելի գերազանց կարելի է ասել:

շուշտ սորա իշխանութեան միջոցին կառուցուած կըլինի. ինչպէս որ իւր հրամանաւ սուրբ խաչն ևս փոխադրուած է այստեղ: Բարսեղ Կաթուղիկոսի օրերունմէ ՓԱ. դարու վերջերն կամ ՓԲ. դարու սկիզբներում (1082—1113) երբ Մամիկոնեանց ազգապետներն ջնջուեցան, Սուրբ Խաչի վանականներն ևս ցրուած կըլինին Բասենի և Արշարունեաց սահմաններումն կատարուած այս կոտորածի երեսէն. և Սուրբ Խաչն վանքին մեծ աւանդն հետերնին տարած. որ Բարսեղ Կաթուղիկոսի կարգադրութեամբն Անի մայրաքաղաքում մնացած է:

Սուրբ Խաչի վանքն այժմ բոլորովին աւերակ է եւ արեւելեան ու հարաւային որմերն կիսականգուն կը մնան, այս տեղ ուխտի կը գնան Բասենի հայերն Հոգեգալստեան օրերէն սկսած մինչև Աարգավառի օրն:

Քիւի — Քիլիսե. Սուրբ Խաչի հիւսիսային արեւմտեան կողմն չորս ժամու չափ հեռաւորութեամբ անտառին մէջ, վիմափոր զոյգ մի եկեղեցիներ են, (Գեղարդայ վանուց վիմափորին նման) որոց միոյն գմբեթին մէջ կախուած ջահի շղթայն կախուած կը մնա, տակաւին. եկեղեցւոյն արեւելեան կողմն կերևի գերեզմանատան ընդարձակութիւնը և խաչ քարերն. նոյնպէս և միարանաց սենեակներու փլատակներն կերևին, որմէ կը հետևի թէ վանք է միարանական ուխտի: Այս վանքը պիտի լինի անշուշտ Տարօնեցւոյն յիշած Թրին վանքը<sup>1)</sup>: Ըստ որում նորա ցոյց տուած հանգամանքներն ունի. այսինքն սպիտակ քարի մէջ փորուած, և Կարս քաղաքին հարաւային կողմն կընկնի. և այս սահմաններում ուրիշ վիմափոր վանք չկայ. բացի քանի մի այրերէ, որոց համար տեղացիք կաւանդեն: Թէ ճգնաւորաց մենարան եղած են ժամանակին:

Սուսուգի վանք. Խօշայ - Քիլիսեի արեւելեան կողմն միւսկէս ժամու չափ հեռաւորութեամբ երկրորդ հովտումն բարձրադիր դաշտակի մի մէջ կանգուն կեցած է սևախառն կարմիր քարերով կառուցած եկեղեցի, որոյ և ոչ մի քարն ինկած չէ: Վանքին մօտ կը գտնուի գիւղի աւերակ, և արեւելեան կողմն գերեզմանատուն: Այս գիւղին աւերուելու պատճառն կասեն տեղացիք ջրոյ պակասութիւնն, որոյ համար և սուսուգ կը կոչուի: Եկեղեցւոյն վերայ ոչ մի արձանագրութիւն չկայ, նոյնպէս և ոչ գերեզմանատան քարերուն վերայ: Վասն որոյ և շիմացուիթ թէ հին ժամանակներումն այս վանքն կամ գիւղն ինչպէս կը կոչուէր:

(1) Կարուց Աբաս Թագաւորի գործոց մասին գրելէ ետքն նորա մօր (Մուշեղ Թագաւորի կնոջ) վերջին կեանքն յիշելով կասէ. «Իսկ մայր Թագաւորին Աբասայ՝ բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր Թագաւորացն Փաւստոսոյ Անեքերիմայ եւ Գրիգորի, ի բաց ընկեցեալ զերկրաւոր պսակն՝ յոչինչ համարեալ զփառս անցաւորս, ընթանայր զճետ երկնաւորին, զվարս կրօնաւորութեան յանձն առեալ՝ երթեալ բնակէ ի տեղին, որ Թրին վանք կոչի, զի են եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի ընդդէմ հարաւոյ. եւ աղօթից եւ գործոց բարեաց պարապեալ եւ հոգեւոր առաքինութեանս »:

Քեյիլի վանքի վանքի մասին Վրացի վանքին դեպ արևելք Յ ժամու չափ հետա-  
 ւորութեամբ ձորի մէջ քարաժայռի մի վերայ կայ հաստատուն վանք,  
 և ձորոյն մէջ փոքր պոստանատեղի. այս վանքն այսպէս կը կոչեն ձորին  
 այժմու անունէն՝) անընդմիջ արձանագրութիւն շունի: Այս ձորում կը  
 բնակին տասն տնւոր քիւրտեր, որ իրենց համար կը գործածեն եկեղեցին  
 իրրե շտեմարան և մարագ: Ամբողջ ձորն ու բարձրաւանդակներն փա-  
 կուած են մայրերով, որ մոմի նման երկնցած են դեպ ի վեր մի հաւա-  
 սար երկայնութեամբ՝ Լիբանանու նոճիներէն աւելի ուղիղ և բարձր: Այս  
 Քէյիլիայ ձորէն դեպ ի արևմուտք կսկսի հետզհետե թանձրանալ ան-  
 տան:

Այսպէս կամ Այս քիլիս. Քէյիլիայ ձորէն դեպ ի արևելք անտառէն դուրսն  
 երկու ժամու չափ հետաւորութեամբ քիւրտի գիւղ մի է, որոյ արևելեան  
 կողմն կանգուն կեցած է եկեղեցին կարմիր ու սպիտակ մարմարիտնատե-  
 սակ քարերով բարձրացուցած՝). օրոցաձև ծածքի հարաւային արևմտեան  
 կողմէն կամարին մի մասն քանդած են այս վերջին պատերազմի միջոցնե-  
 րում: Տեղացիք կը պատմեն թէ շատ անամ քիւրտերն աշխատած  
 են քանդել այս եկեղեցին և քարերն իրենց շինութեան գործածել,  
 բայց չեն կարողացել և ոչ քար մի հանել. պատերազմին միջոցներն կը  
 պատահի այն տեղ մի Ռուսաստանցի, որուն կը վարձեն քիւրտերն և կը  
 ձեռնարկէ քանդել: Մեծ պղինձներով ջուր տաքացնելով տանիքին վե-  
 րայ լեցուցած է այնպէս՝ որ ջուրը լճացել և շաղախներն թուլագուցեր է.  
 այնուհետե երբ սկսեր է առաջին փորձն անել քանդելու, նոյն Ռուսաս-  
 տանցին ևս ինկել եւ մեռած վերցուել է. քիւրտերն այս դեպքէն ետքն  
 այլ ևս ձեռք զարկած չեն եկեղեցւոյն: Քիւրտերն այս ցանկութիւնն ու-  
 նեցել են, որպէս զի մի գուցէ Ռուսաց տիրապետութենէն ետքն, չրջակայ  
 հայ բնակիչներն գան և գրաւեն գիւղն այն եկեղեցւոյն պատճառաւ. ինչպէս  
 որ ժամանակ ժամանակ չրջակայ գիւղերու հայերն կը խօսին եղեր:

Այս եկեղեցւոյն հոյակապ շինութիւնն այժմ մինչև վերին կամարներն  
 լեցուցած է խոտով, որուն համար գիւղացիներն ասացին թէ տանուտէրի

(1) Օսմանցւոց լեզուով կոչուած Քէյիլի - ձորէսի կընշանակէ կաքաւուց ձոր. եւ  
 առնուած է անշուշտ այս սահմաններում գտնուած շատ կաքաւներու խումբերէն, որ  
 մինչև այժմ իսկ կերելին եւ կերգին իրիկուն եւ առաւօտ:

(2) Սպիտակ ու կարմիր քարերն երկու հաւասար լեծութեամբ յօրինուած են քա-  
 ւակուսի քարերն գրեթէ կէս կանգնաչափ մեծութիւն ունին. իսկ երկրորդներն ե-  
 րեք քաւորդ կանգնաչափ. ամեն մի շարքում մի կարմիր եւ մի սպիտակ քար է  
 դրուած. եւ վերայի շարքում՝ փոքր կարմիր քարին վերայ երկայն սպիտակ քար մի  
 դրուած. նոյնպէս եւ փոքր սպիտակ քարին վերայ երկայն կարմիր քար մի դրուած է.  
 այնպէս որ ամբողջ պատին երեսում երկայն կարմիր քարերն իրարու կցորդուած. յա-  
 տակի հիւսիսային անկիւնէն դեպ ի բարձրութեան հարաւային անկիւնը զուգահեռա-  
 կաններ կը կազմեն. նոյնպէս եւ սպիտակներն, որոց միջում կարմիր եւ սպիտակ  
 փոքր քաւակուսի քարերն եւս ուրիշ դժեռ կը ձեւացնեն:

խոսան է: իսկ տանուտէրն պատասխանեց, թէ գիւղի հասարակութեան կը պատկանի: Եկեղեցին բնաւ յիշատակարան չունի արտաքին կողմէն: և ոչ գրան վերայ: Հիւսիսային կողմէն կերեփն շինութեան հիմունք: Բայց ոչ ընդարձակ: Շրջակայքում բնակող հայերն ևս հեռաւոր լինելով բնաւ աւանդութիւն մի չունին այս եկեղեցւոյն վերայ:

Եկեղեցին ինքն ըստ ինքեան ձայն կը աւայ հայ անցորդներուն: Թէ այստեղ երբեմն մեծ հայեր կային, իմաստուն հայեր կը խորհէին: Ճարտարարուեստ երիտասարդներ կը գործէին: կայտառ պատանիներ կը պարէին: կաճէին ու կը զօրանային: քրիստոնէութեան ոգւով վառուած բարեպաշտ ընտանիքներ կը ձոխանային: որոց աշխատասիրութեանն ու մեծագործութեան անկենդան քարերն կը վկայէին: մեռան այն հայերն: մարեցաւ այն եռանդն պակասեց այն աստուածսիրութիւնն: լռեցին այն մեծագործութեանց վկայներն: ես որ միայն մնացի, ահա ծԹ: դարու ասիական ոչ քրիստոնեայ ոգւոյն և անարուեստ ձեռքերու հարուածին հանդիպեցի:

Յոր - վերեկի եկեղեցիներն Ալաճայ - Գիլիսէէն դէպ արեւելք երկու վերստաշափ հեռաւորութեամբ տաճկարնակ գիւղ մի է Յոր - Աերէն: որոյ արեւելեան կողմն ձորակին մօտ կանգուն կան երկու եկեղեցիք մեծ և փոքր: երկուքն ևս կարմիր քարերով և մի Լնոյն ճարտարութեամբն ու Անւոյ Եկեղեցիներու ճաշակովն են շինուած:

Այս երկու եկեղեցիներուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնն հազիւ 150 քայլաշափ կը լինի: որմէ կարելի է կարծել, թէ Անւոյ Եկեղեցիներուն բազմանալ սկսած դարու հայոց ոգին ունեցել են և այս գիւղացիք և մայրաքաղաքի բնակչաց օրինակին են հետեւել: Եկեղեցիներու հնութենէն ևս կերեի թէ նոյն դարու գործ է: Երկու եկեղեցիներուն և ոչ միոյն վերայ արձանագրութիւն չերևիր:

Փոքր եկեղեցւոյն շուրջը կերևին գերեզմանաքարեր որոց և ոչ միոյն վերայ գիր չերևիր: Ի հարկէ գրուած քարերն անյայտացրել են հետզհետէ հայ բնակչաց գաղթելէն վերջն: Գերեզմանատան խաչքարերու կտորներէն երկու հատ կերևին տան մի պատին մէջ իրրե հասարակ քար գրուած: այս գիւղացւոց հետ յարաբերութիւն ունեցող Բասնեցի հայերէն ոմանք, որ նոցա տներն երթեկեկած են, կը հաստատեն թէ ոմանց սննեակներու կրակարաններուն (բոսխարի) ճակատի քարերն գերեզմանի խաչքարերէն են: որոց վերայի խաչի գիծն ջնջել են: Բայց միւս քանդակներն կը մնան տակաւին:

Հին հայաստանի Վանանդ գաւառի Բասնե կոչուած մասին մէջ այսշափ վանքեր տեսանք, որք ամայի մնալով, այս դարու կեսէն վերջն սկրած են աւերուել: ոմանց որմերն ծակած, ոմանց կամարներն խոնարհած:

Ուրիշ շատ վանքեր կը յիշուին անտառին մէջ, որոց տեղերն մեր ճանապարհին վերայ չլինելուն պատճառաւ, միջոց չունեցանք զատ զատ տեսնելու: Բայց գրեթէ ամեն տարի անտառի այն կողմերն երթեկեկող անձանց պատմածին նայելով հետեւեալ վանքերն կը յիշուին յանուանէ: որոց

մէկ քանին ընակուածնէ հետի ձորերի և սարերի մէջ լինելով, առանց աւերելու ամայի վիճակի մէջ կը գտնուին որոց անուններն են.

Խանչէլլիի վանք. Կամամլիի վանք. Ագ—Քիլիսէի վանք, Մէշիտլիի վանք. Խըզըլ — Քիլիսէի վանք. Իմամգոմի վանք. Չէյթուսն, օղլուի գոմեր. Սարը — Ղամիշի վանք. Քեսիք Գիւմպէթ. Ներքին սարը Ղամիշի վանք. Մոգք. Չամուռլուի վանք. Ագ—Բուսարի վանք. Ալայ — Քիլիսէ. Կէչէվանք. Քափու — Քիլիսէ:

Այս անուններն տեղական գիւղերու և տիրապետողին անուններէն առնելով կը յիշուին. իսկ իրենց բուն անուններն յայտնի չեն:

Բասն Գաւառակի սահարանակ գիւղերն. Մասրճըք Իսլամձոր. Սըհամթ. Հերամէրտ. Մժնկերտ. Խարայ — Օրղան. Չէք. Եէնի — Քեօյ. Սըռպասան. Քեօրօղլի. Սեօկիւտու. Մաղարաճըք. Խանտերէ. Եազըլի. Իզնոց. Վերին Մժնկերտ. Սոմերան. Մամաշ. Պօղայ — Գալէ. Խըզըլ. Քիլիսէ. Քափու — Քիլիսէ. Խօշայ — Քիլիսէ. Վանք. Վերին Խարախուրուտ. Ներքին Խարախուրուտ. Յակոբա. Մէշիտլի. Իմամգոմ. Քէքլիկ. Ալայ — Քիլիսէ. Շատեփան. Յոգք — Վերան. Տօքուզ — Պուլաղ. Ախօս. Գալայ — Պաշի. Օտալար. Իւրքէր. Շոուլու. Տէյիրմէնտերէ. Չիչէկլու. Պաղչէճիք. Քոր. Բուսար. Չարապխանայ. Սաթվերէն. Ղազու — Գայայ. Գոմըք. Սէրսէմ. Չօլախու. Խափսիլուխ. Կիւլլիւճէ. Ագ — Քիլիսէ. Օրթայ. Գալայ. Չերմէլի. Կիւլթէիէ կամ Գոզան. Պալիսը. Սըթահան. Կիւլանթապ. Եանդուս — Կասան. Կեօղլէիկ. Այղուան. Ագ Մէշիտ.

Այս գիւղերու բոլորն ևս Կայաքանակ եղած են մինչև այս դարու ըսկիզբն. այնուհետև հայերն գաղթած են որոց մեծագոյն մասն այժմ Ախալքալակի գաւառում կը գտնուին. Այս Տաճկաքանակ գիւղերէն զատ հետեւեալ գիւղերն ևս կան որ անբնակ են.

Կէքլի. Խարայ — Բուսար. Խըզըլճայ. Պէշիկլի. Փորանկի. Մէշիտլի.

Ներին Բասնի գիւղերն. Ներքին Բասն կոչուած գաւառն վանանդայ անմիջապէս հարաւային կողմն է Երասխ գետով բաժանուած. այս գաւառի հայաբնակ գիւղերուն մեծագոյն մասն Օսմանցոց սահմանին մէջ կը գտնուի իսկ Ռուսաց սահմանին մէջ կը գտնուին այժմ յետագայ երեք գիւղերն միայն.

Պաշ գիւղ. Թերևս մի ժամանակ այս գաւառակի աւանն եղած լինի. որով և այս անունն առած. այս գիւղն հովտի մը մէջ է. ուր 100 էն աւելի հայ տնտէրք կը բնակին. եկեղեցի մի ունին յանուն Սուրբ Աստուածածնի, անշուք բողոքովին. որ ոչ կալուած ունի և ոչ ուսումնարան. Երկիրն արգաւանդ է և ինքնաբեր Շիրակայ դաշտերուն նման. ժողովուրդն ևս հայ երկրագործներու սովորական կեանքն ունի. ամենաբեր արտերու մէջ միայն ցորեն ու գարի կը ցանեն և կը հնձնեն. Մինչև անցեալ պատերազմն այս ժողովուրդն ուրիշ ապրուստ մի ևս ունին եղեր, այն է անտառէն փայտ տանել մինչև Կարին ու վաճառել. Այժմ որ անտառէն փայտ կտրելն արգելուած է, հաճութեամբ կը լսէին մեր խօսքերուն որ կը յորդորէինք

այգի տնկել, և անտառ ձգել իրենց արտերու շորս կողմն:

Այս գիւղին մէջ որ և է ՀնուԹիւն շերեիր, բայց Հիւսիսային կողմն Երասխայ ափերում բլուրներու վերայ մարտկոցներու և բերդերու աւերակներ կերևին:

Արմուշու. Պաշ գիւղէն դէպի Հարաւային արեւելք մի ժամու հեռաւորութեամբ Հայաբնակ գիւղ մի է, 60 տան չափ ժողովուրդով. (որոց մէջ կան և ինն տուն պապաղաւան Հայեր), Եկեղեցի մի ունին յանուն Սուրբ Աստուածածնի անշուք բոլորովին և մութ. շորս կողմէն պատին կիս տներ շինուած են, այնպէս որ գիւղը մտնողը բնաւ չկարծէր թէ Եկեղեցի կայ այս գիւղում. և երկու երեք անգամ գնալէն վերջն ևս Հազիւ թէ կարողանայ մարդ այս Եկեղեցւոյն ճանապարհը գտնել. Գիւղացւոց վիճակը նոյն է բոլորովին ուրիշ գիւղացւոց վիճակին հետ:

Այս գիւղում որ և է ՀնուԹիւն շերեիր, անունը միայն Հայաստանի Հին անուններէն կերևի թէ Տանձոտ կամ Տանձուտ եղած լինի, (ինչպէս Սիւնեաց, Գուգարաց և Վղարջք գաւառներում կը յիշուին.) որ Օսմանցւոց տիրապետութենէն ետքն նոցա բարբառովն Արմուտլու կոչուած է:

Զիրիկ. Արմուտլուէն դէպ արեւելք մի ժամու հեռաւորութեամբ բլուրի մի ստորոտումն Հին գիւղ մի է. տասն տարիի չափ յառաջ այս գիւղի բնակիչներն գաղթել գնացել են, և գիւղն աւերակ մնացել է. վերջին տարիներումս Վարնեցի Յակովբ Շէյթանեան անուն Հայ մի գնած է այս գիւղի հողերն Օսմանցւոց գանձարանէն, և այժմ մշակել կը տայ կիսովի. և Արմուտլուի աղքատ ընտանիքներէն տասն տան չափ եկած նստած են այստեղ, գրեթէ բնակութիւն դրած, և երկրագործութիւննին կը շարունակեն:

Գիւղին Հիւսիսային կողմն բլուրին անմիջապէս ստորոտումն Հոյակապ եկեղեցի մի կայ սրբատաշ քարերով շինուած. որոյ Հարաւային ամբողջ որմն ու արեւմտեան և արեւելեան որմերու Հարաւային անկիւններն ինկած են. նոյնպէս և Հարաւային երկու սիւներուն վերայի կամարն ինկած է. և այսպէս կիսաւեր կը մնայ. Եկեղեցւոյն արեւմտեան կողմն կերևի գերեզմանատան տեղն. ուր եկեղեցւոյ ձևով ութ անկիւնի փոքր մատուռ մի կայ, փոքր դռնակով. որոյ մէջ սեղանի կամ խորանի ձև մի շերեւելէն կարելի է հետեցնել թէ գերեզման մի է, բայց ամենեին որ և է գիր կամ նշան չունի: